

Մեր հավետ ողբացյալ Գևորգ Զ Կաթողիկոսը վարչական մեծ կարողություն ցույց տված էր Իր Նոր-Նախընկալի առաջնորդության երկար շրջանին իսկ, տակավին ծայրագույն վարդապետի անտիճանով, երբ Տնտեսական խորհրդո նախագահությունը վարած էր 1918-ին սկսյալ և մեկ-երկու տարվան մեջ «Ազատ եկեղեցական»-ներու շարժումը արմատախիլ ըրած էր։ Սակայն իր վարչագիտության ապացույցը տվավ Իր տեղակալության շրջանին։ Հատորին 49-րդ էջին մեջ կկարդանք՝ «Հազարամյակների շարունակ Հայ եկեղեցին բաժանել էր իր ժողովրդի վիշտն ու ուրախությունները և հարկ եղած դեպքում, օրհնել իր քաջարի ժողովրդի պաշտպանության համար գործածվող կտրուկ ուրբ։ Այս անգամ էլ նա իրեն գլուխ ունենալով Գևորգ արքեպիսկոպոսի պես խոհուն, անձնդիր և քաջ հովիվ, պարզեց դարերով իմաստանացած իր սրբադան Հավատամքը՝ Հայրենիքի հետ, ժողովրդի համար»։

Մեզի՝ հայերու համար արդեն սուրբ մը եղած է Մեծագործ Գևորգ Զ-ը, որը պաշտոնում Իր կենդանության, ինչպես Իր հետ ունեցած թղթակցությունս, իր դրկած հեռագիրը Քրիստոսի օրով և էջմիածին այցելող եպիսկոպոսի մը Իր ըրած հարցումները իմ մասին ցույց կուտան, և միշտ պիտի պաշտոնի իր հիշատակը։ Դժվար է գրել երկար մանրամասնություններ Անոր կաթողիկոսության շրջանի մասին և տղայական պիտը ըլլա, եթե հոս գրեմ խիստ սովորական եղած ձևը,

թե «ամեն հայ պետք է ունենա այս հատորեն օրինակ մը»... որովհետև այդ ակներև է։

Հատորին 46 պատկերներուն մեջ շատեր կան, որ առաջին անգամ կհանդիպինք և խիստ հետաքրքրական են, ինչպես Մայր Տաճարի վերանորոգման մանրամասնությունները ցույց տվողները, սակայն կարգ մը «մտերիմ» պատկերները, ինչպես «Վեհափառը աշխատասեղանի առաջ» (էջ 99) անմոռանալի տպավորություն կընեն ամենուս վրա։ 92-րդ էջին վրա կտեսնենք գուրգուրալից արտահայտությունը Վեհափառին, երբ «օծում է Վաղգեն եպիսկոպոսի ձակատը»։ Թեև միայն մեր այժմու սիրեցյալ Վեհափառ Կաթողիկոսը Ինքը կրնա նկարագրել նույն պահուն Իր կրած տպավորությունները, սակայն շատ դժվար ալ չէ դանոնք երևակայել, երբ կտեսնենք Իր վերացյալ ակնածալից և խոհուն կեցվածքը, որ ցույց կուտա վայրկյանին վեհությունը։

Սրաի սեղմումով և խորունկ վիշտով կուգանք տեսնել 1953-ին հանած պատկերը՝ «Վեհափառը Ծաղկյա դահլիճում» և հաջորդ երեսին վրա (129) Անոր պարզ և խնկելի տապանալքարը...

Կարելի՞ է չհարգել Անոր պաշտելի հիշատակը։

ՄԱՏԹԵՆՈՍ Ա. ԳԱԼԵՆՏԵՐ

(Բոստոն, «ՊԱՅՔԱՐ» օրաթերթ, 3 հոյեմբերի 1956 թ.)

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ

Բուենոս-Այրեսի Հայաստանյայց Առաքելական եկեղեցու պաշտոնավթեր՝ «Հայ կեդրոն», Հարավային Ամերիկայի հայկական համայնքի աղգային ծանոթ դեմքերեն տիար Արմեն Պերկամալիի և տիար Հովհաննես Տիարպեթրյանի հայրապետական բարձր պարգևատրման՝ Ս. Գրիգոր Լուսավորչի Առաջին կարգի ականակուռ ոսկյա շքանշանի արժանանալու առթիվ, վերևի խորագրի տակ գրում է իր 1956 թվականի հոյեմբերի համարում.

«Նորին Սրբազնություն Հարավային ամերիկահայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Ս. Սիրոն արքեպիսկոպոս Մանուկյան, բարձրորեն գնահատելով Պերկամալիի և Տիարպեթրյանի ամուլներու մեր համայնքին մատուցած բազմապիսի օգտաշատ ծառայությունները, միաժամանակ հարազատ թարգմանը հանդիսանալով մեր ամբողջ գաղութի անկեղծ զգացումներուն, խնդրամատուց հանդիսացավ Նորին Ս. Օ-

ծովյուն Ամենայն Հայոց ընդհանրադարձ Հայրապետ Ս. Ս. Վաղգեն Ա Կաթողիկոսի մոտ, պարգևատրելու համար հիշյալ աղգայինները Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի ականակուռ ոսկյա շքանշաններով։

Նորին Սրբազնություն, որ լավագույնս կըրնահատե մեր ժողովրդին ծառայություն մատուցանող ամեն կարգի գործիչները, ընդհանրաբար երթալով Պատվիրակ սրբազանի դիմումին, բարձրորեն գնահատելով Պերկամալիի — Տիարպեթրյանի զույգի գործունեություններն ու բարեգործությունները, անոնց ընդհանրաբար դարավոր եկեղեցիի բարձրագույն շքանշանները, որոնք Նորին Ս. Օծովյան սրբատառ կոնդակներու հետ միասին, անցյալ սեպտեմբերի 16-ին, հանդիսավոր կերպով, հավարտ սուրբ պատարագի, Նորին Սրբազնության կողմից հանձնվեցան տիար Արմեն Պերկամալիի և Հովհաննես Տիարպեթրյանի։

Արմեն Պերկամալի, գոհաբերության անդուգական օրինակով, քառասուն երկար տարիներ, մեր գաղութի ղեկավարներու ամենն կարկառուն դեմքը եղած է շարունակ։ Անցնող քառասնամյակի ընթացքին նա, միակ ընդմիջումով մը, անխոնջ հարատևությամբ, վարած է արժանտինահայ մեր գլխավոր հիմնարկության՝ Հայ գաղութային կեդրոնի և անոր հաջորդող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո հոգաբարձության Կեդրոնական վարչական խորհրդի նախ գնահատականության և ապա ատենապետության պատասխանատու և ծանր պաշտոնները։

... Տիար Հովհաննես Տիարպեիրյան, որ թեև մեր գաղութի համար շունի Արմեն Պերկամալիի քառասնամյա հնությունը, բայց քսանն ավելի տարիներու իր ներկայությունը մեզ մոտ և իր կատարած բարեգործությունները, իրեն տված են մեր համայնքի բարերարներու շարքին մեջ աչքառու դիրք մը, արժանի ընելով գինք ժողովրդի անկեղծ սիրուն ու գնահատանքին։

Արդարև Հովհաննես Տիարպեիրյանը, ըլլալով գերազանցողին գործի մարդ, անտարբեր չէ գտնված երեք մեր գաղութի համայնական պետքերուն հանդեպ, գիտցած է ընտրել, ինչպես այլ երկիրներու մեջ, նաև մեզ մոտ, աղգային ինքնապահպանման ծառայելու կոչված աղգակներու լավագույն միջոցները—Եկեղեցին և դպրոցը, — որոնց վրա կեդրոնացուցած է իր բարեգործությունը անսակարկելի առատաձեռնությամբ։

... Նույն օրը Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցին և բակը լեցնող խուռներամ բազմությունը մեր ազգայիններու, փութացած էր իր ներկայությամբ հարգանքի և գնահատության ցույց մը ընել մեր գաղութի երկու պատվական ամուլներուն։

... Բացառիկ էր այս տարվա խաչվերացը, որովհետև Ամենայն Հայոց սիրեցյալ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջին կարգի ադամանդակուտ շքանշանով գնահատած էր մեր գաղութի զույգ մը պատվական՝ ազգայիններու մատուցած ծառայությունը, շքանշանին կցելով նաև իր օրհնաբաշխ կոնդակը, որ պիտի կարդացվեր սուրբ պատարագին անմիջապես վերջը։

Դասին մեջն են Պերկամալի և Տիարպեիրյան ընտանիքները իրենց բոլոր պարագաներով և հուզումով կհետևին արարողության։

... «Էջ Միածինն» շարականի երգեցողության հոգեթով թրթռացումին տակ, Հարու-

թյուն վարդապետ, ափսեի մը մեջ զետեղված զույգ մը կոնդակներն ու շքանշանները խնկարկությունը և մոմակալներու առաջնորդությամբ Ս. Սեդան բարձրացուց և համբուրելն վերջ գանձը, իր մաքուր առողջանությամբ կարդաց ի լուր ժողովրդյան։

Հուզիչ էր այն պահը, երբ սրբազանը կոնդակի ընթերցումն վերջ, սրտի անհուն գոհունակությամբ մը բարերարներու կուրծքերն կկախեր շքանշանները։

Պ. Պերկամալի, հուզված օրվան խորհուրդներն, խնդրեց սրբազան հորմեն, որպիսիք քանի մը խոսք ընեն, հայտնելու համար իր երախտագիտությունը Նորին Ս. Օծություն Ս. Ս. Վազգեն Հայրապետին։

Տիար Արմեն Պերկամալին իր խոսքին մեջ մանավանդ ըսավ։

«... Ես վստահ եմ, թե երբ Նորին Վահագնությունը զմեզ պատվեց, Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանը շնորհելով, նա առավելագույն կերպով ուզեց պատվել մեր ամբողջ համայնքը, որ միշտ հավատարիմ մնացած է իր Ազգին, իր կրոնքին, իր Եկեղեցիին ու Մայր Աթոռին։

Եվ ինչ կրնանք արդյոք ընել մեր երախտագիտությունը հայտնելու համար Նորին Ս. Օծության, իր ալս շնորհքին առթիվ։

Մենք, Տեր և Տիկին Տիարպեիրյան և ես կխոստանանք, և վստահ եմ, թե մեզ հետ այս սուրբ տաճարը լեցնող հավատացյալ ժողովուրդը նույնպես կխոստանա, և ինչու չէ, մեր ամբողջ համայնքը կխոստանա շարունակել ընթանալ այն ճամբով, որով մինչև հիմա քալած ենք, և պիտի գերազանցենք։

Կխնդրեմ Զեղ Սրբազնութենեն, որ բարեհաճի թարգմանը հանդիսանալ Նորին Վահագնության, մեր հարգանքի և որդիական սիրո զգացումներուն։

... Նույն կիրակի գիշերը, Սրբազան Պատվիրակը ի պատիվ հայրապետական շքանշանին արժանացած Պերկամալի—Տիարպեիրյան ամուլներուն, առաջնորդարանի խորհրդարանին մեջ ընդունելություն մը ունեցավ, որում հրավիրված էին հիշյալ ամուլներու ընտանեկան պարագաները, Կեդրոնական վարչական խորհուրդը, Եկեղեցական տիկնանց կազմակերպության վարչության և իր հանձնախմբերու, Հայաստանյայց Եկեղեցվո Երիտասարդաց կազմակերպության անդամներ, անդամներ, Յուրեսի վարագա Ս. Նաչ Եկեղեցվո հոգաբարձության և մամուլի ներկայացուցիչները, ինչպես նաև հոգևորականաց դասը։

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԲԱՐԳԱՎԱՃՈՒՄԸ

Քեյրութում (Լիբանան) հրատարակվող «Ջաբրոն» օրաթերթը, Իր 1957 թվականի հունվարի 6-ի համարում, «Ս. Էջմիածնի բարգավաճումը» խորագիրը կրող իր խմբագրականում, ի միջի այլոց գրում է նաև հետևյալը.

«... Հիսուսի Ս. Ծննդյան այս տարեդարձին, երբ քննական ակնարկ մը նետենք Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական Աթոռներուն ու վիճակներուն վրա, ամենն աչքառու և ամենն ուրախառիթ պարագան կգտնենք Ս. Էջմիածնի վերածաղկումը, բարգավաճումը: Անթրիսաւը, ինչպէս գիտենք, մատնված է ողբերգական կացութեան, և կարելի չէ ակնկալել, որ օտարներու և դաշնակ փառամտիկներու բռնազրավումին ենթարկված այդ վայրեն լույս ճառագայթն: Երոտաղնի Աթոռը մատնված է ժամանակավոր դժվարութեան: Պոլսո Աթոռը, շնորհիվ Գարեգին Պատրիարքի ճիգերուն, բռնած է վերելքի ճամբան: Բայց Ս. Էջմիածնի այս պահու պարզած պատկերն է, որ ամենն ավելի լավատեսութիւն կներշնչե բոլոր անշահախնդիր հավատացյալներուն: Երիտասարդ, համակրելի ու կոռովի Ամենայն Հայոց Հայրապետին, Նորին Ս. Օծութիւն Վազգեն Ա-ի առաջնորդութեամբ, և շնորհիվ Հայկական կառավարութեան բարյացակամութեան, անցնող տարին

եղավ հաղթանակի տարի մը. երիտասարդ Հայրապետի գահակալութեան առաջին տարին հատկանշվեցավ հոգեպարար նվաճումներով: Վերաբացվեցան ավելի քան քսան եկեղեցիներ՝ Երեւանէն մինչև Ղարաբաղ ու Թիֆլիս ու Մոսկվա: Մեծ թափով առաջ տարվեցան Էջմիածնի վերանորոգման աշխատանքները: Ամուր հիմքու վրա դրվեցավ կրոնական դաստիարակութիւնը Հոգևոր Ճեմարանին մէջ, և Վազգեն Ա. Կաթողիկոս ներկայիս մեծագույն կարևորութիւնը կընծայի գիտակից հոգևորականներու պատրաստութեան գործին: Նորոգվեցան բազմաթիւ պատմական վանքեր: Կանոնավորաբար կհրատարակվի «Էջմիածին» պաշտոնաթերթը և այլն:

Վերջին հաշիւով, ինչպէս հայ ժողովրդի, նույնպէս Հայաստանյայց Եկեղեցվո ապագան առավելաբար պիտի կերտվի Մայր Հողին վրա: Այս իսկ պատճառով, մեծ հրճվանքով ու խանդավառութեամբ պետք է դիմավորել Ս. Էջմիածնի ծաղկումն ու բարգավաճումը:

Ս. Ծննդյան տոնին առթիւ, կմնա սըրտանց մաղթել, որ հայ հավատքն ու հայ բարոյականը դորանան ամեն տեղ, և «Խաղաղութեան Իշխան»-ին տիրապետութիւնը նշանակե հարատև ու բեղմնավոր խաղաղութիւն և համերաշխութիւն:

